# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2017 թվականի N 132 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1638-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

----------------------------------------------------------------------------------------------------------

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական հիմնարկը պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին» N 1638-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) 2-րդ կետի «ա» ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«էկոտուրիզմի զարգացմանն աջակցելը.».

2) 3-րդ կետը «թ» ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ժ», «ժա», «ժբ», «ժգ» ենթակետերով.

«ժ) զբոսաշրջային գործակալությունների գործունեության իրականացմանն աջակցելը,

ժա) զբոսաշրջային օպերատորների գործունեության իրականացմանն աջակցելը,

ժբ) տեղերի ամրագրմանը և զբոսաշրջային ոլորտի այլ ծառայությունների իրականացմանն աջակցելը,

ժզ) զովազդի տարածման հետ կապված գործունեության իրականացմանն աջակցելը։»։

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ սույն որոշումից բխող համապատասխան փոփոխությունների կատարումը և դրա պետական գրանցումը։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ                                        Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. փետրվարի 20
Երևան